ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության անվանումը

Հաստատում եմ
Տնօրեն Դ. Կոստանդյան
«15» 05 2023թ.

# ԽՄԲԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ (ՆԵՐԻ) ԱՆՎԱՆՈՒՄԸ *Արվեստ, Մայրենի*
ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ *Հեքիաթների աշխարհում*

ԾՐԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿ *Շահանե Հովսեփյան*

Քննարկվել, հավանության է արժանացել «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի 15.05.2023թ. նիստում: Արձանագրություն թիվ 5 :

Քննարկվել, հավանության է արժանացել
հումանիտար առարկաների

մեթոդմիավորման 12.05.2023թ. նիստում: Արձանագրություն թիվ 10 :

Մեթոդմիավորման նախագահ ____ (ստորագրություն) *Դանիելյան Մ.* (ազգանուն, անուն)

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ ____ (ստորագրություն) *Ավանեսյան Ս.* (ազգանուն, անուն)

Մաս. կրթ. աջակցության գծով գծով տնօրենի տեղակալ ____ (ստորագրություն) *Գևորգյան Ա.* (ազգանուն, անուն)

2023թ.

ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ *«ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ»*

ԽՄԲԱԿԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ՝

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ՀԻՄՆԱԿԱՆ (ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ), 1-9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

ԽՄԲԱԿԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

**Շաբաթական 1 դասաժամ**

**Ընդհանուր տևողությունը՝ 34** դասաժամ, որից՝ 15.5 դասաժամ տեսական

18.5 դասաժամ գործնական

ԽՄԲԱԿԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐԸ՝

«Հեքիաթների աշխարհում» խմբակի պարապմունքները նպաստում են սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների, հմտությունների զարգացմանն ու ամրապնդմանը: Աշակերտը պետք է վարժ, անսխալ և արտահայտիչ կարդա, անսխալ ու ճիշտ շեշտադրությամբ կարդա և վերարտադրի ստեղծագործությունը, բնութագրի և վերլուծի կերպարները, բանավոր կամ գրավոր արտահայտել կարծիք՝ հերոսների վարքագծի կամ դեպքերի կապակցությամբ, ներկայացնի լեզվաոճական առանձնահատկությունները, բարձրաձայն, հասկանալի և արտահայտիչ ընթերցի, որոշի տեքստի գործող անձանց խոսքի առանձնահատկությունները, հակադրի տարբեր անձանց արաքները, նրանց վերաբերմունքը շրջապատի նկատմամբ, տեքստի վրա ինքնուրույն աշխատելու և դատողություններ անելու հմտություններ ձեռքբերի, ինչը կնպաստի նաև «Մայրենի», «Արվեստ» առարկաների դասավանդման ընթացքում ձեռք բերած գիտելիքների և հմտությունների ամրապնդմանը: Աշակերտների մոտ կզարգանան հանրակրթական պետական չափորոշչի հանրակրթական տարրական և հիմնական ծրագրերի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող հետևյալ վերջնարդյունքները. ազատ գրավոր և բանավոր հաղորդակցվի գրական հայերենով, կարդա, հասկանա, վերարտադրի պարզ գեղարվեստական և տեղեկատվական տեքստեր, ձևակերպի տեքստի հիմնական գաղափարը (ազգային փոքրամասնությունների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով) (ՀՊՉ Տ-1), մտքերն արտահայտելիս բերի պարզ հիմնավորումներ, կատարի ընդհանրացումներ և պարզ դասակարգումներ (ՀՊՉ Տ-7), ճանաչի իր հայրենիքը, ներկայացնի տեղեկություններ Հայաստանի պատմության, աշխարհագրության, մշակույթի մասին (ՀՊՉ Տ-16), արտահայտի սեփական մտքերը, զգացմունքները, կարիքները և ցանկությունները, գիտակցի իր յուրահատուկ լինելը (ՀՊՉ Տ-26), ճանաչի և խուսափի վնասակար սովորություններից, բացատրի դրանց հետևանքները (ՀՊՉ Տ-31), 1) վերլուծի և ընկալի տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանա դրանց հիմնական գաղափարը (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով) (ՀՊՉ Հ-1), հայերեն ազատ զրուցի իրեն հետաքրքրող թեմաների մասին, կառուցի ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառի ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով) (ՀՊՉ Հ-2), գնահատի իր և ուրիշների կարծիքն ու փաստարկները, վերլուծի պատճառահետևանքային կապերը և կայացնի որոշումներ (ՀՊՉ Հ-25), արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը (ՀՊՉ Հ-31), դրսևորի մշակութային ընկալման և արժևորման կարողություններ, արվեստի որոշ տեսակներում ստեղծագործական աշխատանքներ կատարելու ունակություններ և հմտություններ (ՀՊՉ Հ-42), ճանաչի ստեղծագործական տարբեր ժանրեր և ոճեր, արվեստի միջոցով ստեղծագործաբար արտահայտի իր գաղափարները և հույզերը (ՀՊՉ Հ-43), ճանաչի տարբեր ժամանակաշրջանների, ազգերի և մշակութային-գաղափարային խմբերի արժեքները, բացատրի դրանց ազդեցությունն ու արտացոլումը տեղական և համաշխարհային մշակույթի մեջ (ՀՊՉ Հ-44), ճանաչի և արժևորի իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ (ՀՊՉ Հ-45):

*ԽՄԲԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ*

«Հեքիաթների աշխարհում» խմբակի նպատակներն են՝ աշակերտը բնագիրը վարժ, անսխալ ու արտահայտիչ կարողանա կարդալ, իմանա հեքիաթի հիմնական գաղափարը, նկարագրի և ներկայացնի հերոսներին, նրանց արարքներն ու դրդապատճառները, ըմբռնի հեքիաթի և իրականության տարբերությունը, ընկալի հեքիաթի դաստիարակչական նշանակությունն անձի ձևավորման գործում, իմանա պատմվածքի արտահայտած հիմնական բովանդակությունը, զարգացնի բառագործածության կարողությունները՝ հարստացնելով իր ակտիվ բառապաշարը:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս դասընթացն ուսումնասիրելուց հետո աշակերտը պետք է՝

1. Հայկական ժողովրդական հեքիաթներ:
2. Ղազարոս Աղայանի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, օտար հեքիաթագիրների հեքիաթները:
3. Պատմվածքներ, հատվածներ վեպերից:

*ԱՐԴՅՈՒՆՔ 1. Հայկական ժողովրդական հեքիաթներ:*

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝

- Կարողանում է վերարտադրել ընթերցած հեքիաթը
- Կարողանում է բնութագրել և վերլուծել կերպարները
- Կարողանում է ներկայացնել լեզվաոճական առանձնահատկությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի միջոցով: Խմբավարն աշակերտին հանձնարարելու է ընթերցել և վերարտադրել «Դավթի հեքիաթը», «Ծնողասեր տղեն», «Փողի ուժը», «Հազարան բլբուլ», «Ագահ հարուստը», «Դե հիմի դու պար արի», «Գող տղի հեքիաթը» հեքիաթները, բնութագրել և վերլուծել այդ հեքիաթների կերպարները, ներկայացնել լեզվաոճական առանձնահատկությունները:

Արդյունքը կհամարվի դրական, եթե աշակերտը կատարած լինի բոլոր առաջադրանքների 70%-ը:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանքներ: Արդյունքի ուսուցման բովանդակության մաս են կազմում. «Դավթի հեքիաթը». Այրարատ, «Ծնողասեր տղեն». Այրարատ, «Փողի ուժը». Գուգարք, «Հազարան բլբուլ». Տուրուբերան, «Ագահ հարուստը. Այրարատ, «Դե հիմի դու պար արի». Գուգարք, «Գող տղի հեքիաթը». Գուգարք: Դասավանդման համար անհրաժեշտ է հայկական ժողովրդական հեքիաթների ժողովածուներ, համակարգիչ, համացանց, պրոյեկտոր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական՝ 3.5 դասաժամ

Գործնական՝ 4.5 դասաժամ

| *Արդյունք 1.* | | *ԸՆԴՀ.* | *ՏԵՍ.* | *ԳՈՐԾ.* |
|---|---|---|---|---|
| 1.1 | «Դավթի հեքիաթը». Այրարատ | 1 | 0.5 | 0.5 |
| 1.2 | «Ծնողասեր տղեն». Այրարատ | 1 | 0.5 | 0.5 |
| 1.3 | «Փողի ուժը». Գուգարք | 1 | 0.5 | 0.5 |
| 1.4 | «Հազարան բլբուլ». Տուրուբերան | 1 | 0.5 | 0.5 |
| 1.5 | «Ագահ հարուստը. Այրարատ | 1 | 0.5 | 0.5 |
| 1.6 | «Դե հիմի դու պար արի». Գուգարք | 1 | 0.5 | 0.5 |
| 1.7 | «Գող տղի հեքիաթը». Գուգարք | 1 | 0.5 | 0.5 |
| 1.8 | Հեքիաթի դիտում և քննարկում | 1 | | 1 |
| | *Ընդամենը* | *8* | *3.5* | *4.5* |

*ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ղազարոս Աղայանի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, օտար հեքիաթագիրների հեքիաթները:*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝*

- Կարողանում է վերարտադրել ընթերցած հեքիաթը
- Կարողանում է բնութագրել և վերլուծել կերպարները
- Կարողանում է բանավոր կամ գրավոր արտահայտել կարծիք՝ հերոսների վարքագծի կամ դեպքերի կապակցությամբ
- Կարողանում է բարձրաձայն, հասկանալի և արտահայտիչ ընթերցել:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի միջոցով: Խմբավարն աշակերտին հանձնարարելու է ընթերցել և վերարտադրել Ղազարոս Աղայանի «Անահիտ», «Մանուկ-Խան», «Արեգնազան կամ կախարդական Աշխարհ» հեքիաթները, Հովհաննես Թումանյանի «Չախորդ Փանոսը», «Կոնատ աղջիկը», «Քաջ Նազարը», «Ոսկի քաղաքը», «Անխելք մարդը» հեքիաթները, Ավետքի Իսահակյանի «Ամենապիտանի բանը», «Արևի մոտ», «Այդ ոչինչը ես եմ», «Աղա Նազար» հեքիաթները, Գրիմ եղբայրների «Երեք լեզու», «Երեք փետուրները», «Հսկան ու դերձակը» հեքիաթները, Շառլ Պերոյի «Կոշկավոր կատուն» հեքիաթը, Օսկար Ուայլդի «Եսասեր հսկան» հեքիաթը, Հանս Քրիստիան Անդերսենի «Եղևնին», «Երիցուկը» հեքիաթները, Անտուան դը Սենտ-Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը» հեքիաթը, բնութագրել և վերլուծել վերոնշյալ հեքիաթների կերպարները, բանավոր կամ գրավոր արտահայտել կարծիք՝ հերոսների վարքագծի կամ դեպքերի կապակցությամբ:

Արդյունքը կհամարվի դրական, եթե աշակերտը կատարած լինի բոլոր առաջադրանքների 70%-ը:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանքներ: Դասավանդման համար անհրաժեշտ է Ղազարոս Աղայանի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Գրիմ եղբայրների, Շառլ Պերոյի, Օսկար Ուայլդի, Հանս Քրիստիան Անդերսենի, Անտուան դը Սենտ- Էքզյուպերիի հեքիաթների ժողովածուներ, համակարգիչ, համացանց, պրոյեկտոր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական՝ 6 դասաժամ

Գործնական՝ 7 դասաժամ

| *Արդյունք 2* | | *ԸՆԴՀ.* | *ՏԵՍ.* | *ԳՈՐԾ.* |
|---|---|---|---|---|
| 2.1 | Ղազարոս Աղայանի «Անահիտ», «Մանուկ- Խան» հեքիաթները | 1 | 0.5 | 0.5 |
| 2.2 | Ղազարոս Աղայանի «Արեգնազան կամ կախարդական Աշխարհ» հեքիաթը | 1 | 0.5 | 0.5 |
| 2.3 | Հովհաննես Թումանյանի «Չախորդ Փանոսը», «Կոնատ աղջիկը» հեքիաթները | 1 | 0.5 | 0.5 |
| 2.4 | Հովհաննես Թումանյանի «Քաջ Նազարը», «Ոսկի քաղաքը», «Անխելք մարդը» հեքիաթները | 1 | 0.5 | 0.5 |
| 2.5 | Ավետքի Իսահակյանի «Ամենապիտանի բանը», «Արևի մոտ» հեքիաթները | 1 | 0.5 | 0.5 |
| 2.6 | Ավետքի Իսահակյանի «Այդ ոչինչը ես եմ», «Աղա Նազար» հեքիաթները | 1 | 0.5 | 0.5 |
| 2.7 | Գրիմ եղբայրների «Երեք լեզու», «Երեք փետուրները» հեքիաթները | 1 | 0.5 | 0.5 |
| 2.8 | Գրիմ եղբայրների «Հսկան ու դերձակը» հեքիաթը | 1 | 0.5 | 0.5 |
| 2.9 | Շառլ Պերոյի «Կոշկավոր կատուն» հեքիաթը | 1 | 0.5 | 0.5 |
| 2.10 | Օսկար Ուայլդի «Եսասեր հսկան» հեքիաթը | 1 | 0.5 | 0.5 |
| 2.11 | Հանս Քրիստիան Անդերսենի «Եղևնին», «Երիցուկը» հեքիաթները | 1 | 0.5 | 0.5 |
| 2.12 | Անտուան դը Սենտ- Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը» հեքիաթը | 1 | 0.5 | 0.5 |
| 2.13 | Անիմացիոն ֆիլմի դիտում և քննարկում | 1 | | 1 |
| | *Ընդամենը* | *13* | *6* | *7* |

*ԱՐԴՅՈՒՆՔ 3. Պատմվածքներ, հատվածներ վեպերից:*

*ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝*

- Կարողանում է վարժ, անսխալ և արտահայտիչ կարդալ
- Կարողանում է տարբեր ժանրերի և ծավալների ստեղծագործությունները հասկանալով վերարտադրել, տիրապետում է կարդալու ու վերարտադրելու կարողություններին
- Կարողանում է որոշել տեքստի գործող անձանց խոսքի առանձնահատկությունները, հակադրել տարբեր անձանց արաքները, նրանց վերաբերմունքը շրջապատի նկատմամբ
- Ձեռք է բերել տեքստի վրա ինքնուրույն աշխատելու և դատողություններ անելու հմտություններ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի միջոցով: Խմբավարն աշակերտին հանձնարարելու է ընթերցել և վերարտադրել հատվածներ Վախթանգ Անանյանի «Որսորդական պատմվածքներ», «Փոքրիկ մայրեր», Ակսել Բակունցի «Ծիրանի փողը», Հովհաննես Թումանյանի «Գելը», «Իմ ընկեր Նեսոն», «Եղջերուն», «Քեռի Խեչանը», Վահե Հայկի «Կաթիդ փարան չմոռնաս, մամա», Ստեփան Զորյանի «Չալանկը», «Մի կյանքի պատմություն», Խաչիկ Դաշտենցի «Արաբոն», «Ֆիդայիները» ստեղծագործություններից:

Արդյունքը կհամարվի դրական, եթե աշակերտը կատարած լինի բոլոր առաջադրանքների 70%-ը:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանքներ: Դասավանդման համար անհրաժեշտ է Վախթանգ Անանյանի, Ակսել Բակունցի, Հովհաննես Թումանյանի, Վահե Հայկի, Ստեփան Զորյանի, Խաչիկ Դաշտենցի ստեղծագործությունների ժողովածուներ, համակարգիչ, համացանց, պրոյեկտոր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական՝ 6 դասաժամ

Գործնական՝ 7 դասաժամ

| *Արդյունք 3* | | *ԸՆԴՀ.* | *ՏԵՍ.* | *ԳՈՐԾ.* |
|---|---|---|---|---|
| 3.1 | Վախթանգ Անանյան. «Որսորդական պատմվածքներ». հատվածներ | 1 | 0.5 | 0.5 |
| 3.2 | Վախթանգ Անանյան. «Փոքրիկ մայրեր». հատվածներ | 1 | 0.5 | 0.5 |
| 3.3 | Ակսել Բակունց. «Ծիրանի փողը». հատվածներ | 1 | 0.5 | 0.5 |
| 3.4 | Հովհաննես Թումանյան. «Գելը». հատվածներ | 1 | 0.5 | 0.5 |
| 3.5 | Հովհաննես Թումանյան. «Իմ ընկեր Նեսոն». հատվածներ | 1 | 0.5 | 0.5 |
| 3.6 | Հովհաննես Թումանյան. «Եղջերուն». հատվածներ | 1 | 0.5 | 0.5 |
| 3.7 | Հովհաննես Թումանյան. «Քեռի Խեչանը». հատվածներ | 1 | 0.5 | 0.5 |
| 3.8 | Վահե Հայկ. «Կաթիդ փարան չմոռնաս, մամա». հատվածներ | 1 | 0.5 | 0.5 |
| 3.9 | Ստեփան Զորյան. «Չալանկը». հատվածներ | 1 | 0.5 | 0.5 |
| 3.10 | Ստեփան Զորյան. «Մի կյանքի պատմություն». հատվածներ | 1 | 0.5 | 0.5 |
| 3.11 | Խաչիկ Դաշտենց. «Արաբոն». հատվածներ | 1 | 0.5 | 0.5 |
| 3.12 | Խաչիկ Դաշտենց. «Ֆիդայիները». հատվածներ | 1 | 0.5 | 0.5 |
| 3.13 | Միջոցառման նախապատրաստում | 1 | | 1 |
| | *Ընդամենը* | *13* | *6* | *7* |

*ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*


- «Դավթի հեքիաթը». Այրարատ
- «Ծնողասեր տղեն». Այրարատ
- «Փողի ուժը». Գուգարք
- «Հազարան բլբուլ». Տուրուբերան
- «Ագահ հարուստը. Այրարատ
- «Դե հիմի դու պար արի». Գուգարք
- «Գող տղի հեքիաթը». Գուգարք
- Ղազարոս Աղայան
    - «Անահիտ»
    - «Մանուկ- Խան»
    - «Արեգնազան կամ կախարդական Աշխարհ»
- Հովհաննես Թումանյան
    - «Ձախորդ Փանոսը»
    - «Կոնատ աղջիկը»
    - «Քաջ Նազարը»
    - «Ոսկի քաղաքը»
    - «Անխելք մարդը»
- Ավետիք Իսահակյան
    - «Ամենապիտանի բանը»
    - «Արևի մոտ»
    - «Այդ ոչինչը ես եմ»
    - «Աղա Նազար»
- Գրիմ եղբայրներ
    - «Երեք լեզու»
    - «Երեք փետուրները»
    - «Հսկան ու դերձակը»
- Շառլ Պերո
    - «Կոշկավոր կատուն»
- Օսկար Ուայլդ
    - «Եսասեր հսկան»
- Հանս Քրիստիան Անդերսեն
    - «Եղևնին»
    - «Երիցուկը»
- Անտուան դը Սենտ-Էքզյուպերի
    - «Փոքրիկ իշխանը»
- Վախթանգ Անանյան
    - «Որսորդական պատմվածքներ»
    - «Փոքրիկ մայրեր»
- Ակսել Բակունց
    - «Ծիրանի փողը»
- Հովհաննես Թումանյան
    - «Գելը»
    - «Իմ ընկեր Նեսոն»
    - «Եղջերուն»
    - «Քեռի Խեչանը»
- Վահե Հայկ
    - «Կաթիդ փարան չմոռնաս, մամա»
- Ստեփան Զորյան
    - «Չալանկը»
    - «Մի կյանքի պատմություն»
- Խաչիկ Դաշտենց
    - «Արաբոն»
    - «Ֆիդայիները»